*ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ*
*ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԿԻՑ*
*ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1*

ք.Երևան

<<24>> <<01>> 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետ Հ.Հարությունյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ, այսուհետ՝ <<Վաճառող>>, ի դեմս գործադիր տնօրեն Ա.Մխիթարյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 27.12.2017 թվականին կնքած N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրի 8.1, 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիր (այսուհետև համաձայնագիր) հետյալի մասին՝

1. *Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը*

1.1 Սույն Համաձայնագրով (այսուհետև համաձայնագիր) Գնորդը հայտնում է, որ 27.12.2017թվականին կնքած N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռք բերման համար ՀՀ պետական բյուջեյով ֆինանսական միջոցեր նախատեսվել են, ինչով պայմանավորված կողմերը կնքեցին սույն Համաձայնագիրը, ըստ որի սույն Համաձայնագրվ Վաճառողը պարտավորվում է 27.12.2017թվականին N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված լրատվամիջոցներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար,իսկ վճարումը Գնորդի կողմից կատարվում է սույն Համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված ձևով:

1.2 Սույն Համաձայնգիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 20.12.2018 թվականը:

2. *Մատակրարման պայմանագիրը*

2.1 Վաճառողը պարտավորվում է Ապրանքը հանձնել Գնորդին 27.12.2017թվականին կնքած N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

2.1.1 Կողմերը եկան համաձայնության 27.12.2017 թվականին կնքած N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրի հավելված 2-ը հաստատել ներքոհիշյալ խմբագրությամբ՝

3. *Ապրանքի գինը Մատակարարման պայմանները*

3.1 Սույն համաձայնագրով մատակարարի կողմից հանձնվելիք Ապրանքի միավորի գինը ներկայացված է պայմանագրի Հավելված 1-ում: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2461000 (երկու միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար ) ՀՀ դրամ:

3.2 Պայմանագրի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները,ինչպես նաև կատարողի կողմից իրականացվող ծախսերը:

4. *Այլ պայմաններ*

4.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 27.12.2017թվականին կնքած N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի գնման պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման և ընդունման, Կողմերի պատասխանտվության հետ կապված և այլ հարաբերությունները թողվում են անփոփոխ:

Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական պահպանության ծառայություն | << ՀՀ մամուլի տարածման գործակալություն >>ՓԲԸ |
| ք.Երևան, Պռոշյան փողոց 1 փակուղի 20 | ք.Երևան, Սասունցի Դավթի հրապարակ 2 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/h 900011011004497 | Հ/Հ 1510001986720100 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 00401345 |
| Պետ Հ.Հարությունյան | Գործ. Տնօրեն Ա.Մխիթարյան |

Հավելված N 2

N ՀՀ ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ | 210000 | 420000 | 660000 | 880000 | 1090000 | 1300000 | 1510000 | 1730000 | 1900000 | 2000000 | 2210000 | 2461000 | 2461000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 2461000( երկու միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ | | | | | | | | | |

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փողոց 1 փակուղի 20
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչության
Հ/հ 900011011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Հ.Հարությունյան

ՎԱՃԱՌՈՂ

<< ՀՀ մամուլի տարածման
գործակալություն >>ՓԲԸ

ք.Երևան, Սասունցի Դավթի հրապարակ 2
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510001986720100
ՀՎՀՀ 00401345

Գործ. Տնօրեն Ա.Մխիթարյան